

Արդարեւ Երուսաղէմի կացութիւնը չափազանց տագնապալի էր այդ օրերուն և Յովհաննէս Այնթապցի կաթողիկոս, որուն վիճակն էր Երուսաղէմ այն ատեն, չէր կրնար անտարբեր մնալ:

Դաւիթ Արդար պատրիարքի պաշտօնավարութեան շրջանին (1571-1613), մասնաւորապէս 1590 էն յետոյ Անատոլուն յուզող Ճէլալիներու ապստամբութեան պատճառով, գէպի Երուսաղէմ ուխտաւորութիւնը դադրած էր:

1601ին արդէն պարտք մը գոյացեր էր այս պատճառով և ինչպէս յիշուեցաւ Ազարիա կաթողիկոս Զուղայեցիի ատեն ժողովարարութիւն մը կատարելով այդ պարտքը մասամբ վճարած էին:

Սակայն երկրին քաղաքական կացութիւնը այդ թուականէն յետոյ շատ աւելի տագնապալի դարձած էր, տագնապի մատնելով նաև Երուսաղէմի վանքը, քանի որ անիշխանութենէն օգտուելով հոն ալ կեղեքումներ կը կատարուէին: Այնպէս որ մինչև 1610 թուականը 40,000 շրուշ պարտք գոյացած էր (Սէֆէն Դադէր Լեհադի. ՀԱ. 1934 էջ 554):

«Այլ ճար ու հնար չի մնաց. ինչ ամօրք կայր, ոսկեղին, արծաթեղին, քի՛ խաչ, սկի, քունւիւտ, գիրք, եւ շորջաւ եւայլն ամենայն